

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արձավիրի մարզի Մարգարա համայնքի գյուղապետարանի 2012թ-ի
հունվարի 1-ից մինչև 2012թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած
ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

2011թ-ի նոյեմբեր ամսին Մարգարայի գյուղապետարանը կազմել է
գյուղապետարանի 2012թ-ի բյուջեի նախագիծը և ներկայացրել է ավագանու
քննարկմանը: Քննարկումից հետո այն հաստատվել է ավագանու կողմից,
որով և առաջնորդվում են:

2012թ-ի բյուջեն կազմում է 27271,6 հազար դրամ:

Ներկայումս նախկին տարիների և ընթացիկ տարվա աշխատավարձի ու
սոց վճարների պարտքեր չունենք:

2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքի բյուջե է մուտքագրվել
22984,1 հազար դրամ, այդ թվում՝

1. հողի հարկ 4811,2 հազար դրամ 100,2%
2. գույքահարկ 1144,3 հազար դրամ 88,9%
3. վարձակալական հողի հարկ 1230,1 հազար դրամ 68,3%
4. դոտագիա 14880,5 հազար դրամ 100%
5. Այլ մուտքեր 838,0 հազար դրամ
6. Տեղական տուրք 80,0 հազար դրամ 100%:

2012 թ-ին ծախսվել է 22184,5 հազար դրամ, այդ թվում՝

1. Աշխատավարձ 8693,6 հազար դրամ
2. Սոց վճար 1611,6 հազար դրամ
3. Դրամաշնորհ/նախակրթարան/ 905,0 հազար դրամ
4. Սոցիալական ծախսեր 1000,0 հազար դրամ
5. Ֆոնդային բյուջեից այլ ծախսեր 6389,7 հազար դրամ
6. Այլ ծառայություններ 3584,6 հազար դրամ:

2012թ-ի տարեվերջին բյուջեյի ընթացիկ հաշիվներում ունենք 2821,2
հազար դրամ գումար:

Տարվա ընթացքում գյուղապետարանը անցկացրել է 12 ավագանու նիստ 37 որոշումով, համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է 16 որոշում և 7 կարգադրություն, մուտքագրվել է 67 գրություն, ելք է արվել 105 գրություն: 2012թ-ին կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները՝

1. Ցուցաբերվել է 1000,0/մեկ միլիոն/ դրամ սոցալական օգնություն համայնքի անապահով բնակիչներին:
2. «Մերձափնյա» ՋՕԸ-ին աջակցություն է ցուցաբերվել ջրատարների մաքրման և ջրի վարձի հավաքագրման աշխատանքներին:
3. Անկախության օրվա կազմակերպման համար, համայնքի տարածքում գտնվող հայկական զորամասին ֆինանսական օգնություն է տրամադրվել:
4. Համայնքի գրադարանը վթարային մշակույթի տնից տեղափոխվել է գյուղապետարանի շենք և կարգավորվել է գրադարանային ֆոնդը:
5. Վերջին զանգի կապակցությամբ ֆինանսական օգնություն է ցուցաբերվել, 100,000 /հարյուր հազար/ դրամ, 2012թ-ի շրջանավարտներին:
6. Մարզարայի գյուղապետարանը պարբերաբար կազմակերպում է աղբահանման և ճանապարհների բարեկարգման, ավագապատման աշխատանքներ:
7. 2012թ-ի գարնանային զորակոչի և զորահավաքի ժամանակ Մարզարա համայնքի կողմից աջակցություն է ցուցաբերվել զորակոչի տարիքի բոլոր զինակոչիկներին, Արմավիրի Ջին-կոմիսարիատ ներկայացնելու համար:
8. Պարբերաբար, գյուղապետարանի կողմից, օգնություն է ցուցաբերվել համայնքի այն բնակիչներին, որոնց մոտ խնդիրներ են առաջացել փաստաթղթերի ձևակերպման և նոր փաստաթղթերի ձեռք բերման համար:
9. Ըթացքի մեջ է համայնքում խմելաջրի ցանցի կառուցումը:
Հրատապ խնդիր է նաև համարվում մշակույթի տան վերանորոգումը:



Մարզարա համայնքի
ղեկավար՝

/ Խ.Ասատրյան /

16 հունվարի 2013թ. գ. Մարզարա